ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

2016թվականի մարտի 15-ին կայացավ Արենիի համայնքի ժողով: Ժողովին ներկա էին 105(մեկ հարյուր հինգ) մարդ: Ժողովի նախագահ ընտրվեց Սերյոժա Սուքիասյանը, քարտուղար՝ Գևորգ Սիմոնյանը: Ժողովին մասնակցում էր Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ձեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Սերյոժա Սուքիասյանը.

Արենի համայնքի 2015թվականի տարեկան բյուջեն կազմել է 47854.4հազար դրամ, որից՝

- դոտացիա՝ 31 920.3հազար դրամ,
- սեփական մուտքեր՝ 11 001.7հազար դրամ, կամ 112%
- տարեվերջի ազատ մնացորդ՝ 3254.1հազար դրամ:

Բյուջեի մուտքային մասը կատարվել է 102.5%-ով, որից՝

- գույքահարկ՝ 4757հազար դրամ կամ 125.2%,
- հողի հարկ՝ 2423.6հազար դրամ կամ 100.9%,
- հողի վարձավճար՝ 1266.2հազար դրամ կամ 90.4%,
- տեղական տուրքեր՝ 666.4հազար դրամ կամ 190.4%,
- հողի օտարումից մուտքեր՝ 4814.4հազար դրամ,
- օրենքով սահմանված այլ ոչ հարկային եկամուտներ՝ 1888.5հազար կամ 101%:

Արենի համայնքի 2015 թվականի բյուջեի ծախսային մասը կազմել է 47098.5 հազար դրամ կամ 94.3%:

Համայնքում 2015թվականին իրականացվել է հետևյալ աշխատանքները.

Ճանապարհների սպասարկում:

- հանդամիջյան ճանապարհների խճապատում:

Խճապատվել և բարեկարգվել է համայնքի Սազ հանդամաս տանող ճանապարը: Ընդհանուր նախահաշվային գումարը կազմել է 588հազար դրամ: Արենիի համայնքապետարանի կողմից ներդրման չափը կազմել է 256հազար դրամ: Էդիկ Սիմոնյանը և Նաիրի Երեմյանը յուրաքանչյուրը կատարել են 166հազար դրամի ներդրում:

- համայնքի 3-րդ փողոցի 330մետր հատվածի (Մշակույթի տնից մինչև դպրոց) ասֆալտապատում և հարակից կոյուղագծի կառուցում: Ասֆալտապատման նախահաշվային ընդհանուր արժեքը (ներառյալ նախագծումը և տեխնիկական հսկողությունը) կազմել է 16 103հազար ՀՀ դրամ, որից 8360հազար դրամը ֆինանսավորվել է 2015թվականի համայնքի բյուջեից, իսկ մնացած մասը նախատեսվում է ֆինանսավորել 2016թվականի տարեկան բյուջեից: Փողոցի հարակից կոյուղագծի ընդհանուր արժեքը կազմել է 542հազար դրամ, որը ամբողջությամբ ֆինանսավորվել է համայնքի բյուջեից:

Ոռոգման բնագավառ:

- ոռոգման ցանցի երեք ինքնահոս մայր առուների՝ Դոլայի, Սուլթանի, Էլի և Խաչի տակ թաղամասի ջրագծի մաքրում և սպասարկում: Համայնքի բյուջեից վճարվել է նշված ջրատարները սպասարկող 4 ջրվարների աշխատավարձերը՝ ընդամենը 1405.6հազար դրամ , ինչի շնորհիվ բարելավվել է ոռոգման ջրի վիճակը և ամռան սակավաջուր ամիսներին բնակչությունը կարողացել է առանց ընդհատումների ոռոգման ջուր ստանալ:
  Համայնքապետարանի կողմից կատարվել է Մայր առուների մաքրման աշխատանքներ: Աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 597 հազար դրամ:
  2015թվականին աշխատանքներ են տարվել «Չիվայի Ձոր» կոչվող հանդամասում կառուցել 3.5կմ երկարության ոռոգման ջրագիծ: Ջրագծի ընդհանուր արժեքը կազմում է 74 229 720 դրամ, որից համայնքի ներդրման չափը կազմում է 3 711 486 դրամ կամ ընդհանուր արժեքի 5 %-Ը: Ծրագիրը իրականացվում է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից: Համաֆինանսավորման գումարի 1 միլիոն դրամը հատկացվել է 2015թվականի համայնքի բյուջեից, գումարի մնացած մասը նախատեսված է ֆինանսավորել 2016թվականի տարեկան բյուջեից: Աշխատանքները ընթացքի մեջ

են և նախատեսվում է մինչև ոռոգման սեզոնի բացվելը ավարտել շինարարական աշխատանքները:

Խմելու ջրի ջրամատակարարում:

- Կատարվել է խմելու ջրի սպասարկում, ջրագծերի ընթացիկ նորոգում և վթարների արագ վերացում: Կնքվել է պայմանագիր մարզային սանհիգենիկ ծառայության հետ որոնք պարբերաբար զննել են խմելու ջրի որակը, ինչի արդյունքում անցած տարում համայնքում ոչ մի համաճարակ կամ ջրային թունավորում չի գրանցվել: Ջրագծերի սպասարկման համար 2015թվականի տարեկան բյուջեից հատկացվել է ընդհանուր 525 հազար դրամ:

Փողոցային լույսեր

- Կատարվել է համայնքի տարածքում տեղադրված ցերեկային լույսերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ և սպասարկում: 2015թվականի տարեկան բյուջեից ընդհանուր հատկացվել է 245 հազար դրամ:

Աղբահանություն

- Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել է աղբահանության աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 2 մլն դրամ:

Հուշարձանի վերանորոգում:

2015թվականի ընթացքում վերակառուցվել է Հայրենական Մեծ և Արցախյան պատերազմներում զոհված արենցիներին նվիրված հուշահամալիրի հարակից տարածքը և ցանկապատը: Ծրագրի ընդհանուր նախահաշվային արժեքը կազմել է 3 647 911 դրամ: Ծրագիրը իրականացվել է Արենիի համայնքապետարանի, Նաիրի Երեմյանի, Ռաֆիկ Սիմոնյանի և Արենիի երիտասարդական ակումբի համատեղ ջանքերով: Արենիի համայնքապետարանի ներդրման չափը կազմել է 500հազար դրամ, Ռաֆիկ Սիմոնյանի ներդրման չափը՝ 100 հազար դրամ, Արենիի երիտասարդական ակումբի ներդրման գումարի չափը՝ 92 հազար դրամ և Նաիրի Երեմյանի կողմից ներդրված գումարի ընդհանուր չափը կազմել է 2 955

911դրամ: Ցանկանում եմ հատուկ շնորհակալություն հայտնել բոլոր մասնակիցներին, այդ գեղեցիկ և համայնքի համար անչափ կարևոր կառույցը գեղեցկացնելու համար:

Մանկապարտեզի կառուցում:

2015թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել համայնքի մանկապարտեզի կառուցման ուղղությամբ: Ինչպես արդեն գիտեք շուրջ 2 տարի է մանկապարտեզի կառուցման համար համայնքապետարանի բյուջեից կատարվել է 6 269 200 դրամի համաֆինանսաորման ներդրում: Նախորդ տարի պահանջեցին որպեսզի գումարի չափը հասցվի 7 մլն դրամի և համայնքի 2015թվականի տարեկան բյուջեից կատարվեց 730 800դրամի ներդրում: Համայնքի 2015թվականի բյուջեից հատկացվել է 578 հազար դրամ մանկապարտեզի էլեկտրամատակարարման և «Բոզբաղլար» թաղամասի տրանսֆորմատորի փոխման համար: Նշված տրանսֆորմատորը 2016թվականին փոխվել է ավելի հզոր ենթակայանով:

Այլ աշխատանքներ

- Կազմակերպվել և պատշաճ կերպով իրականացվել է ավանդական Արենի գինու փառատոնը:
- Կատարվել է հակակարկտային կայանի սպասարկում և տեխնիկական անվտանգության փորձաքննություն, ընդհանուր արժեքը կազմել է 205 հազար դրամ:
- Սոցիալապես անապահով և նորածին երեխա ունեցող ընտանիքներին համայնքի բյուջեից հատկացվել է 1 միլիոն դրամ:
- Խնդիր է դրվել Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի առջև «Չիվայի Ձոր» թաղամասի էլեկտրաֆիկացման համար: Ծրագիրը ընթացքի մեջ է, ՀԵՑ-ից ստացել ենք դրական պատասխան և 2016թվականի ընթացքում նշված տարածքում կտեղադրվի նոր ենթակայան:
- Կազմակերպվել և պատշաճ մակարդակով բնակչությանն է բաշխվել անհրաժեշտ պարարտանյութերը: Բոլոր պարարտանյութերը մատակարարվել են ըստ համապատասխան նշված ժամանկացույցի, ոչ մի շեղում չի եղել և բնակչությունը ժամանակին ստացել է պարարտանյութերի անհրաժեշտ խմբականակները:

- Մշակույթի տանը բոլոր տոնական օրերին կազմակերպվել և անց են կացվել հանդիսավոր միջոցառումներ:

Ընթացիկ 2016թվականին նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները՝

- Հանդամիջյան ճանապարհների և բնակավայրի փողոցների խճապատում, համայնքային ճանապարհների մաքրում ձնից:
- Ոռոգման չորս մայր առուների (ջրատարների) սպասարկում, մաքրում և նորոգում: Ծրագրի իրականացման համար 2016թվականի համայնքի բյուջեում նախատեսվել է 2150 հազար դրամ:
- <<Իֆատ>> ծրագրի շրջանակներում, համայնքի 5% համաֆինանսավորմամբ, նախատեսվում է <<Ախտ>> կոչվող խմելու ջրագծի 1050մետր հատվածի արտաքին ցանցի վերակառուցում (նոր ջրագծի կառուցում):
- Նախատեսվում է խմելու ջրի սպասարկում, ջրագծերի ընթացիկ նորոգում և պահպանում: Ծրագրի իրականացման համար 2016թվականի համայնքի բյուջեում նախատեսվել է 1 244հազար դրամ:
- Նախատեսվում է համայնքի գլխավոր փողոցը՝ տակառի մոտից մինչև Սելավի հրապարակ, կատարել փողոցային լույսերի տեղադրում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 700 հազար դրամ:
- Կազմակերպել և իրականացնել աղբահանության աշխատանքները:
- Հոկտեմբեր ամսվա 1-ին շաբաթ օրը կազմակերպել և պատշաճ կերպով իրականացնել ավանդական Արենի գինու փառատոնը:
- Պարբերաբար կազմակերպել և իրականացնել մշակութային միջոցառումներ, նշանակալից տարելիցների կապակցությամբ:
- Աշխատանքներ տանել Արենիի գյուղապետարանի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ մանկապարտեզի կառուցման ուղղությամբ:
- Համաշխարհային բանկից ստացված ներդրումների շնորհիվ կառավարությունը նախատեսում է համայնքում զարգացնել զբոսաշրջությունը: Ծրագրի նախնական արժեքը կազմում է 6.5մլն դոլլար: Աշխատանքներ տանել ծրագրի պատշաճ կատարման ուղությամբ, վեր հանել համայնքի համար կարևոր և ռազմավարական նշանակության խնդիրները՝ հին կամրջի վերանորոգում, եկեղեցի տանող ճանապարհի ասֆալտապատում և այլն:

- Նախատեսվում է ամռանը վերանորոգել համայնքի և տարածաշրջանի համար կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Նոր Կամուրջը:
- Նախատեսվում է Արենիի համայնքապետարանի, մարզային ոստիկանության և համայնքի բնակչության համատեղ ուժերով Երևան-Մեղրի միջպետական մայրուղու վրա տեղադրել տեսախցիկներ, հնարավոր գողություններից խուսափելու համար:
- Եվրոմիության ծրագրերի շրջանակում նախատեսվում է համայնքում կառուցել գինու թանգարան, զբոսաշրջային կենտրոն, գինու առանձնացված շուկա և այլ ենթակառուցվածքներ: Ծրագրի նախնական արժեքը կազմում է 700 000 եվրո:
- Համայնքում երիտասարդության ներգրավվածության խթանման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Ձեռք բերել մարզական գույք, աղբամաններ, նստարաններ և այլ պարագաներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 994 000 դրամ: Ծրագիրը ավարտական փուլում է և մինչև ամսվա վերջ բոլոր նշված ապրանքները ձեռք կբերվեն համայնքի ակտիվ երիտասարդական խմբի անդամների օգնությամբ:
- Նախատեսվում է «Ավշարա ձոր» կոչվող հանդամասում կառուցել ոռոգման նոր ցանց, ինչը հնարավորություն կտա Խանջյանի առու ջրատարից ջուրը առանց կորուստների հասցնել գյուղացիներին:
- Նախատեսվում է «Ղռ» հանդամասում վերակառուցել ջրատարները, տաշտերի փոխարեն անցկացնել խաղովակաշար ջրի կորուստները նվազեցնելու համար:

Հարգելի համագյուղացիներ, համայնքապետարանը անում է ամեն ինչ որպեսզի բարելավի բնակչության սոցիալ-տնտեսական և կենցաղային խնդիրները, ստեղծի նոր աշխատատեղեր, խթանի համայնքի տարածքում տուրիզմի զարգացումը: Իմ խնդրանքը և պահանջը Ձեզ, ժամանակին վճարեք Ձեզ հասանելիք հողի հարկերը, վարձավճարները և տեղական վճարները, ժամանակին կատարեք ոռոգման առուների մաքրման աշխատանքները, համայնքի տարածքում պահպանեք մաքրություն, ոչ սահմանված վայրերում աղբ մի թափեք, որովհետև համայնքը ունի զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ և մենք ինքներս պահպանելով մեր համայնքը կգրավենք զբոսաշրջիկների ուշադրությունը: Ինչպես արդեն ներկայացրեցի Կառավարությունը մեծ ներդրումներ է պատրաստվում անել զբոսաշրջության բնագավառում: Մենք մեր կողմից պահպանելով կարգ ու կանոն կօժանդակենք ծրագրի իրականացմանը: Ցանկանում եմ 2016թվականին ունենանք առատ բերք, իրացման խնդիրներ չառաջանան

և ոնց որ Արենի համայնքը մարզում միշտ առաջատար դիրքեր է զբաղեցրել, թէ աշխատասիրությամբ, թե լավ ապրելու ձգտումով և կենցաղով այս տարի նույնպես ունենանք այդ ամենը:

Ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ նաև, որ 2015թվականին Հայաստանի Համազգային վստահության խորհրդի կողմից անցկացվող ամենամյա տարվա հանրային ծառայող 2015թվականի մրցանակաբաշխությանը, Արենի համայնքի ղեկավար Սերյոժա Սուքիասյանը Հանրային ծառայության ոլորտի սոցիոլոգիական հետազոտությունների և փորձագիտական գնահատականների արդյունքում արժանացել է «Տարվա գյուղական համայնքի ղեկավար» անվանակոչմանը:

Հայաստանի համայնքների միության և ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված լավագույն գյուղական համայնք մրցանակաբաշխությանը Արենի համայնքը ճանաչվել է 2015թվականի տարվա լավագույն գյուղական համայնք:

Ներկաներին ողջունեց Վայոց Ձորի մարզպետարանի ներքին առդիտի բաժնի պետ Վասակ կարապետյանը: Նա դրական գնահատեց համայնքապետարանի կատարած աշխատանքները, շնորհակալություն հայտնեց համայնքի ղեկավարից նման ծավալի աշխատանքներ կատարելու համար: Պարոն Կարապետյանը նշեց, որ այս դժվարին ժամանակներում շատ դժվար է համայնք ինչ որ ծրագրեր բերել և իրականացնել, սակայն համայնքի ղեկավար պարոն Սուքիասյանը անում է ամեն ինչ համայնքը կայուն զարգացնելու համար: Նա նշեց, որ կատարված աշխատանքների կողքին դեռ շատ անելիքներ կան և ինքը անձամբ ճանաչելով պարոն Սուքիասյանին համոզված է, որ ներկայացված ծրագրերի մեծ մասը ընթացիկ տարում ամպայման կկատարվի: պարոն Կարապետյանը առաջարկեց համայնքապետին աշխատանքներ տանել համայնքում փոքր բիզնեսի զարգացման ուղղությամբ, աշխատատեղեր ստեղծել, որպեսզի երիտասարդները համայնքից չբացակայեն:

Արտահայտվեցին՝

1. Վանիկ Առաքելյան-Ուզում եմ շնորհակալություն հայտնել համայնքի ղեկավարությանը նախորդ տարում կատարած աշխատանքների համար: Արվածի կողքին դեռ շատ անելիքներ կան հուսով եմ ընթացիկ 2016թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից կարվի ամեն ինչ ներկայացված ծրագրերը իրականացնելու համար: Պարոն Սուքիասյան շատ կարևոր է համայնքի գերեզմանոց տանող ճանապարհի բարեկարգումը և խմելու ջրի հարցը: Ինչ ծրագրեր ունեք դրանց հետ կապված:

Պատասխանեց Արենի համայնքի ղեկավար Մերյոժա Սուքիասյանը- Հասկանում եմ Ձեր մտահոգությունը: Իրոք շատ անբարեկարգ վիճակում է գտնվում եկեղեցի և գերեզմանոց տանող ճանապարհը: Խճապատումը ցանկալի արդյունք չի տալիս, թեքության և ջրեր պատճառով շուտ շարքից դուրս է գալիս, իսկ ասֆալտապատման հնարավորություն առայժմ չկա կապված համայնքապետարանի կողմից կատարվող մի շարք ծրագրերի ներդրումների հետ: Առաջիկայում տուրիզմի զարգացման կառավարության ծրագրի շրջանակներում հնարավոր է ասֆալտապատվի ամբողջ ճանապարհը: Իսկ ջրի հետ կապված կմտածենք, կկատարենք համապատասխան նախահաշիվներ, առաջիկայում լուծում տալու համար:

2. ***Արենի համայնքի բնակիչ Արամ Սարգսյան-*** Պարոն Սուքիասյան արդյոք մեր համայնքը երբևէ կունենա բնական գազ:

Պատասխանեց Արենի համայնքի ղեկավար Մերյոժա Սուքիասյանը- Բնական գազի խնդիրը տարածաշրջանային է, պահանջում է գլոբալ լուծում և համայնքապետարանը այդտեղ գրեթե անելիքներ չունի: Եթե կառավարությունը կամ գազպրոմը միջոցներ ձեռնարկեն գազաֆիկացման համար մենք մեր կողմից պատրաստ կլինենք համաֆինանսավորել ծրագիրը: Բայց առայժմ այդ մասին ոչ մի խոսակցություն չկա բացի այն որ մեր մարզպետ պարոն Հարությունյանը այդ հիմնախնդիրը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանին:

3. ***Արենի համայնքի բնակիչ Վահե Սողոմոնյան-*** Պարոն Սուքիասյան <<Խաչի տակ>> թաղամասից երեխաները գալիս են դպրոց, հատում են Երևան-Մեղրի միջպետական մայրուղին: Մայրուղու համապատասխան տեղում հետիոտնի անցումի գծանշումներ և նշաններ չկան և երեխաների

համար ստեղծվում է վտանգավոր վթարային իրավիճակ: Խնդրում եմ ձեռնարկեք միջոցներ խնդրին լուծում տալու համար:

Պատասխանեց Արենի համայնքի ղեկավար Սերյոժա Սուքիասյանը- Խնդիրը իրոք որ շատ լուրջ է, ես հաշվի կառնեմ Ձեր նկատողությունը և առաջիկայում միջոցներ կձեռնարկենք այդ ուղղությամբ:

4. ***Արենի համայնքի բնակիչ Միքայել Գրիգորյան-*** Լուրջ խնդիր է համայնքի խաղողի և դեղձի այգի մշակողների համար անասունների արածեցնելը այգիներում: Աշնան բերքահավաքից հետո անասունները քշում են այգիները, ջարդում հենասյուները և նոր տնկված ծառերը և թփերը: Ես առաջարկում եմ համայնքի ակտիվ երիտասարդների միջոցով տեղակացնենք բնակչությանը թէ ինչ պատասխանատվության կենթարկվեն անասնատերերը եթե առանց այգետիրոջ իմացության արածեցնեն այգիները: Պարոն Սուքիասյան խնդրում եմ սեզոնին ձեռնարկել համապատասխան միջոցառումներ նշված խնդրին լուծում տալու համար:

Պատասխանեց Արենի համայնքի ղեկավար Սերյոժա Սուքիասյանը- Ես բազմիցս խոսել եմ անասնատերերի հետ, զգուշացրել եմ նրանց, որ հեռու տանեն անասունները, հատկապես նորատունկ այգիներից, բայց լինում են դեպքեր երբ անուշադրության պատճառով անասունները մտնում են այգիները: առաջարկում եմ նման դեպքեր լինելուց գրավոր դիմեք համայնքապետարան որպեսզի մենք կարողանանք նաև իրավական լուծում տալ, այլ կերպ հնարավոր չէ:

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքապետարանի կատարած աշխատանքները 2015թվականի ընթացքում գնահատել բավարար:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին աշխատանքներ տանել

   - Համայնքի մանկապարտեզի կառուցման ուղղությամբ:
   - Համայնքի համար ռազմավարական նշանակություն ունեցող հին կամրջի նորոգման համար:

- <<Ախտ>> կոչվող խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցման ուղղությամբ:
- Խիստ ուշադրություն դարձնել հարկերի, վարձավճարների, տուրքերի հավաքագրման վրա: Այն պահել համայնքապետարանի ամենօրյա աշխատանքի ուշադրության կենտրոնում:
- Ավելի որակյալ կազմակերպել աղբահանությունը
- Նորոգել համայնքի հանդամիջյան ճանապարհները
- Առավել ուշադրություն դարձնել հոկտեմբերի 1-ին նախատեսվող ամենամյա գինու փառատոնը պատշաճ մակարդակով կազմակերպելուն:

Ժողովի վերջում Արենի համայնքի ղեկավար Սերյոժա Սուքիասյանը մասնակցության համար շնորհակալություն հայտնեց ներկաներին, հույս հայտնեց, որ հետագայում նույնպես համատեղ աշխատելով կկարողանան լուծել համայնքի առջև ծառացած խնդիրները:

Ժողովի նախագահ՝ Ս. Սուքիասյան

Քարտուղար՝ Գ. Սիմոնյան